

ՆՈՐ ԱՎԵԴԱՔԵՐ

Կ. ՏԱՐԻ

ՀԱՆԼԵՊ, 31 ՅՈՒԼԻՍ, 1931

ԹԻԻ 13

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԴԷՊ Ի ՈՐԻՐ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՖՈՐՏԻ ԳԱՂՏՆԻԲԸ

ԻՐԱԿԱՆ ԱՐԺԱՆԻԲԸ

ՍՐԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՕՏ ՀԱՆԼԵՊԻ ԹՂԹԱԿՑԻՆ

ԲԻԻՐՏԻՍՏԱՆԻ ԱԻԵՏ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԴԻՏԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

Տ. Ճ. Խ.

ՎԵՐ. Ս. ԱՂՊԱՊԵԱՆ

ՎԵՐ. Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ղ. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ԲԱՂԵՑ՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ԱԻԵՏ. ԿԵԱՆՔ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷԶԸ

NOR AVEDAPER
B. P. 287, ALEP, SYRIE

ՏՊԱՐԱՆ ԳՈՒԼԵՑ ՀԱՆԼԵՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կը հրատարակուի ամիսը երկու անգամ, տարեկան բաժնեգրին է 150 դրուշ ստերի։ Սուրբիոյ համար, և մէկ ու կէս տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար։

Յօդուածներու բնագիրները չեն զընկուիլի եթէ այդ մասին փափաք չյայտնուի յօդուածագիրներու կողմանէ։ Հըրատարակուող յօդուածներու համար պէտք է զրկել փոստի ծախսը։

Յօդուածները պէտք է գրուին թուղթին մէկ էջին վրայ մեկանով, դիւրընթեռնի և մաքուր կերպով։

ՀԱՆԼԵՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐՈՒ ՑԱՆԿ 1930 ՅՈՒՆԻՍ
4-1931 ՅՈՒՆԻՍ 31։

Պրն. Յովհաննէս Ծերունեան Հալէպ, ութ տարեկան մանուկ մը, որ հաց ծախելով իր շահած առաջին դումարը, կէս մէծիտ, այս նպատակին նըւիրած է։

Արծաթ դրամ տուողներ.— Հալէպէն Պարոն Եագուպ Մէլէքեան 41 դրուշ (կերպաս), Պրն. Երուանդ Ալմօեան 20 դրշ. (կերպաս), Պրն. Յարութիւն Խաչատուրեան 24 դրշ. (կերպաս)։ (Շար.)

ԱՊԱՀՈՎ

ԱԺԱՆ

ԱՆՈՒՇ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ

Ծնողներ, մի քոյարեք որ ձեր զաւակները պնդութեամբ տառապին։

Mcness Laxative Candy ն ախար լուծողական մըն է ճիշդ շոգուլայի նման։ Մանուկները անկէ չափազանց կ'ախորժին որովհետեւ անուշեղէն մը ուտելու չափ հաճելի կը գտնեն զայն։ Զօրաւոր լուծողական մը չէ, այլ մեղմ, և ուէ յոգնութիւն չի պատճառեր մարմնին։ Կատարելապէս ապահով է չափազանց փափկակազմ մանուկի մը խիստ գործածութեան։

Մանուկները առհասարակ լուծողականէ կը խրաչին, հետեւաբար անոնց մէջ պնդութեան տառապողներու թիւը քիչ չըլլար։ Հետեւանք— մարմնական և մտային ախարութիւն։

Ահա լուծողական մը որ ձեր զաւակները ամենայն յօժարութեամբ պիտի առնեն։

Ջանացէք որ ձեր տուններուն մէջ միշտ գտնուի այս ախար լուծողականը։

Կարելի է գիմել բոլոր յայտնի դեղարաններուն։

ՄԵՂՄ

ՀԱՃԵԼԻ



ՓՈՐՁԷ

ՓՈՐՁԷ

MCNESS SHAVING CREAM

Ինչո՞ւ կը չարչարես երեսդ երբ կարելի է ածիլուելու գործողութիւնդ չափազանց դիւրացնել։ Mcness մորուք կտրուողնող իւղը թող զայն ընէ քեզի համար։

Կը գտնուի բոլոր յայտնի դեղարանները։

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱԼԷՊ, 31 ՅՈՒԼԻՍ, 1931

ԹԻԻ 13

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԴԵՊԻ Ո՞ՒՐ

Սուրբիոյ և Լիբանանի Հայ Աւետարանական Միութիւնը աւելի քան տասը տարիներու պատմութիւն մը ունի։ Պէտք է յարգանքի անվերապահ զգայունքով յիշել բոլոր անոնք, որ այս շրջանին միջոցին բարոյական և նիւթական մեծ գոհողութեամբ իրենց ջանքերը տրամադրեցին մեծ փոթորիկի խեղճութեան հետ։ Վերահաստատութեան այս շրջանին, մանաւանդ սկզբնական տարիներուն, շատ բնական կերպով ոյժերու մեծ մասը սպաւեցաւ անմիջական, տեղական, անցաւոր պէտքերը զոհացնելու և հարցերը լուծելու համար։ Այս նախնական շրջանը անցած է, վերահաստատութեան գործը աւարտելու վերայ է։ Ուստի կ'արժէ այս տաճարաբանական շրջանը ուսումնասիրութեան առարկայ ընել, այս տասը տարուան գործունէութեան արդիւնքը նկատի առնել, մեր ներկայ իրական կացութիւնը լաւ կընդունել, և մեր ուղղութիւնը ուղիղ ճշդել։ Ինչ է մեր վիճակը և դէպի ո՞ւր կը միտինք։ Ահա այս է հարցը։

Շատ հետաքրքրական և օգտակար պիտի ըլլար աչքի առնել ունենալ մեր կրթական, եկեղեցական, աւետարանական տասնամեայ կեանքի գիծին ելեւէջները, և գտնելու ջանալ այս գիծին մէջ տեսնուած ամէն բարձրացումի և անկումի պատճառը։ Ասիկայ մեզի համար անհրաժեշտ է այդ հարցումի վերջնական կերպով պատասխանելու համար։

Ասիկայ գիտական կերպով ընելու համար պէտք է մանրակրկիտ հեռագոտութիւն, թափանցող միտք և երկար ժամանակ։ Մինչև այդ՝ կը փափաքինք ընդհանուր մի քանի դիտողութիւններ միայն ներկայացնել հոս։

ԺԹ. դարու մէջ Աւետ. Եկեղեցիի հաստատութեան և ներկայ վերահաստատութեան շրջանները նկատի առնելով հետեւեալ կէտերը կ'արժէ յիշել։

Նոր երկրի մէջ, նոր կառավարութեանց տակ, նոր ժողովուրդներու մէջտեղ կը կատարուի այս վերահաստատութիւնը։ Այս աշխարհագրական և ընկերային նոր միջավայրին պայմանները նկատի առնելով պէտք է շարժիլ։

Ներկայ հայութիւնը մշակութային, կրօնական, իմացական և ընկերային զարգացումի տեսակէտէն բոլորովին տարբեր մակարդակի մը վրայ կը գտնուի։ Հայ միտքը շատ մը բաներու մէջ լուսաւորուած է, ամէն բանի հանդէպ նախկին պարզ սրտեացութիւնը չունի, ընդհանուր հայութեան մօտ հարիւրին ութսունը և նոր սերունդին զրեթէ հարիւրին 95ը գրեւ կարգաւ գիտէ։

ԺԹ. դարու մէջ աւետարանական շարժումի դէմ հալածանքը եկեղեցական իշխանութեանց և աղայական դասակարգին կողմանէ կը կատարուէր։ Իսկ ներկայիս այդ հալածանքը՝ երբեմն աւելի նրբացած ձեւով՝ ազգայնական, հակակրօնական կամ հոգեւոր արժէքները չգնահատող տարրերու կողմանէ

կը կատարուի:

Նախապատերազմեան աւետարանական միջավայրին մէջ սնած չափահաս սերունդը իր ներկայ կեանքին ուղղութիւնը և գաղափարականը որոշելու համար աչքերը անցեալին կը դարձնէ, ուսկից կը ջանայ իր ներշնչումները ւստանալ: Իսկ 1914 ետքը յառաջ եկած սերունդը կատարեալ շփոթութեան մէջ կը գտնուի, պէտք եղած աւետարանական գիտակցութիւնը չունի, իբր բնական արդիւնքը վերջին 15 տարիներու կեանքի անբնականոն ահուելի պայմաններուն:

Այս պայմաններու տակ վերահաստատութիւնը ամուր հիմերու վրայ կառարելու համար նկատի պնտուելիք կէտեր:

Ամէն մէկ աւետարանական Հայ պէտք է սա հարցումին պատասխանէ թէ ի՞նչ է աւետարանական եկեղեցիի գոյութեան իրաւունքը, ի՞նչ է ներկայիս անոր պատգամը, կա՞ն պատճառներ որոնք անոր գոյութեան տեւականացումը անհրաժեշտ կը դարձնեն, թէ ոչ անոր գոյութեան նշանակութիւնը պարզապէս քրիտոսնէական եկեղեցիներու վրայ մէկ ուրիշի մը յաւելումն է: Մենք համոզուած ենք որ Աւես. Եկեղեցին ունի իրեն յատուկ մասնաւոր նպատակը՝ պատգամը՝ որուն անհրաժեշտ պէտքն ունի աշխարհի մէջ ունէ միջավայր մը ուր ան կըրնայ գտնուիլ: Ասիկայ ամենակարեւոր և կենսական կէտն է ներկայիս Աւետ. ժողովուրդին համար. որչափ այս գիտակցութիւնը զօրանայ մեր մէջ՝ այնչափ յոյս կայ կենսունակ գործունէութեան:

Ներկայիս հայ Աւետ. անհատ եկեղեցիները ունին ընթացիկ հարցեր, որոնք երկրորդական կամ երրորդական կարեւորութիւն ունին և սակայն ոյժերու մեծ մասը անոնց համար կ'սպառին: Դարձեալ՝ մեր ոյժերուն մէջ ցըր-

ուածութիւն մը և չէզոքացում մը ուշագրաւ երեւոյթներ են, որոնք արգելք կը հանդիսանան անկախութեամբ արդիւնքի յառաջ գալուն: Ասիկայ կը կարօտի անմիջական դարմանումի: Երբ տաքին և ներքին կարգ մը ազդեցներ աւետարանականութեան դէմ բնորոշ դիրքի դիրք բռնած են, մեր ոյժերը՝ երկրորդական հարցերը լուծել ջանալով և զիրար չէզոքացնելով սպառել վստանգաւոր կացութեան մէջ կը դնէ աւետարանականութիւնը:

Պէտք է ա'լ սթափիլ: Ներկայիս տրամադրելի լաւագոյն ոյժերը պէտք է կեդրոնացնել գերագոյն նպատակի մը շուրջ. ուրիշ հարցերը, ծրարելիքը պէտք է երկրորդ կամ երրորդ շարքի վրայ ետ մղել և այդ գերագոյն նպատակը առաջին շարքի վրայ դնել: Երբ այդ գերագոյն նպատակը մեր եկեղեցիներուն հոգին զբաւէ, բոլոր ոյժերը այդ գաղափարականով լեցուին մեր շատ մը եկեղեցական դժուարութիւնները և հարցերը շատ աւելի դիւրութեամբ պիտի լուծուին:

Ի՞նչ է այս գերագոյն նպատակը, այն գաղափարականը որ տիրապետող տարրը պէտք է ըլլայ մեր բոլոր եկեղեցական և անհատական կեանքին մէջ: Ամէն ահապ տագնապներու շրջանն է, հակառակ նիւթական աննախընթաց ոյժին և հարստութեան, գիտական ահագին պաշարին՝ մարդիկ իրենք զիրենք տկար և լոյսի կարօտ կ'զգան: Մանաւանդ Հայերս՝ զրկուած մեր նիւթական և բարոյական շատ մը գանձերէն՝ ստիպողաբար կը կարօտինք ոյժի և առաջնորդութեան: Այսպիսի շրջան մը եկեղեցիին տմենապետառութեան կ'ընծայէ գործելու համար: Մասնաւորելով մեր խօսքը Աւետ. եկեղեցիին՝ պէտք է ան իրական և շօշափելի կերպով ցոյցնէ թէ աշխարհի և իմ միակ փրկիչը ամէն պարագայի տակ միշտ կենդանի Բը-

րիստոսն է: Մինչ մարդիկ նիւթական հոգեւոր թշուառութեան մատնուած են, մտաւոր և հոգեւոր անորոշութեան են. թարկուած են, և մինչ հոգեւորականութեան դէմ կազմակերպեալ ջանքեր կը կատարուին, միայն մեր նեղ շրջանակով հետաքրքրուիլ արդեօք ներելի՞ է: Աւետարանականութիւնը ունի իր գոյութիւնը իրենց արդարացինք և սեռականացնել իրեն հոգեւոր ազդակ գործելով հոգեւոր և հոգեւոր անորոշութեան մէջ: Ասիկայ կը նշանակէ հոգեւոր արթնութիւն մը, որ երբ իրականացնայ եկեղեցին պիտի թեւակոխէ իր նոր գարաշրջանին:

ան կրնայ ասիկայ կատարել: Ահա այս պատճառով նպատակը միակ էական կապն է որ բոլոր ոյժերը իրարու կրնայ միացնել. անիկայ պէտք է եկեղեցին լեցնէ իբր մաշող կրակ, անիկայ պէտք է ներշնչէ զայն իր բազմատեսակ գործունէութեան մէջ: Ասիկայ կը նշանակէ հոգեւոր արթնութիւն մը, որ երբ իրականացնայ եկեղեցին պիտի թեւակոխէ իր նոր գարաշրջանին:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՖՈՐՏԻ ԴԱՂՏՆԻՔԸ

Կ. Պրէտֆորտ Ամերիկայի մեծ անհասկնալի խորհրդաւոր մարդը խորագրին տակ Ֆորտի կեանքին մէկ երկար վերլուծումը կ'ընէ Հարփըրը Մէկէզին թերթին մէջ:

Յիշելէ ետքը թէ Ամերիկա միշտ գործի երկիր մը եղած է և թէպէտ վերջին տարիներու միջոցին գործելու սովորութիւնը չափով մը տկարացած է, բայց ապահովապէս կարելի է ըսել որ գործը, աշխատանքն է որ Ամերիկայի զօրութիւնը և քարգաւաճումը յառաջ բերած է. կ'աւելցնէ. «Անկասկած ոչ մէկ Ամերիկացի երբեք Հէնրի Ֆորտէն աւելի գործաւոր մը եղած չէ: Անիկայ իր մանկութենէն սկսելով, շարունակ աշխատած է»:

Հայերու համար շատ կարեւոր է Ֆորտի կեանքին թելադրած այս դասը: Աշխարհի ամէն կողմը ցրուած, ուրիշ ժողովուրդներու վայելած շատ մը առաւելութիւններէն, նիւթական և ընկերային գիւրութիւններէն զրկուած մեր բնկորները՝ կեանքի պայքարին մէջ տրամադրելի իբր լաւագոյն ոյժ և հարստութիւն միայն իրենց երկու ձեռքերը և ուղեղը ունին: Ահա այս երկուքը գործածելով

մարդ ինչ կրնայ ըլլալ՝ կարելի է չափով մը հասկնալ Ֆորտի կեանքին վերլուծումը կարգաւով:

Միշտիկընի մէջ բարեկեցիկ ազարակապանի մը զաւակն է Ֆորտ, և ծնած է 1863ին: Իր մանկութենէն վարժուած է ազարակի մեջ չարաչար աշխատելու, միշտ ալ արհամարանք մը սնուցանելով այս կերպ աշխատանքի դէմ: Պատիկ հասակին մէջ մեքենագիտութեամբ իր միտքը կը յոգնեցնէր, մեքենաներով կը խաղար և այլն:

Երկաթի գիծերու վրայ շոգեշարժ մեքենան տեսնելով ներշնչուեցաւ իր կեանքի գործը որոշելու: Օր մը ազարակէն կ'անյայտանայ և Տիթթոյթ կ'երթայ ուր մեքենաներով գահաբեզէնով զբաղող խանութներու մէջ կ'աշխատի մեքենաներու մասին կարելի ծանօթութիւնը սորվելով: Ապա հօրը քով կը վերադառնայ և կ'ամուսնանայ: Մեքենայի հրապոյրը դարձեալ զինքը Տիթթոյթ կը քաշէ, ուր երկար տարիներ առանձնութեան, աղքատութեան մէջ և ծաղրանքի ենթարկուած կ'աշխատի մինչև որ առաջին Ֆորտին քնաշարժը կը շինուի: Ուրիշներու զրամական օգ-

նութիւնը կ'ապահովէ գործը յառաջ տանելու, բայց ապա կը բաժնուի անոնցմէ և կ'աշխատի՝ կարելի ամենայն գինով և կարելի առաւելագոյն թիւով մարդերուն կառքեր արտագրել, բարձրագոյն վարձքով լաւագոյն գործաւորներ գործել տալով:

Այս ընթացքին արդիւնքը ըլլալով այսօր աշխարհի ամենահարուստ և նիւթապէս ամենայաջող մարդն է Ֆորտ: Եւ թէպէտ ներկայիս 67 տարեկանէ աւելի է, սակայն նոյն խանդով կը շարունակէ գործել: Անոր գործելու բուռն փափաքը կարծես երբեք գոհացում չի գտներ:

Այս կարճ կենսապրական գիծը տալէ ետքը յօդուածագիրը կ'սկսի վերլուծել այս միլիոնատէր գործաւորը, անոր յաջողութեան գաղտնիքը, բարոյական և իմացական կարողութիւնը, սովորութիւնները, ըմբռնումները՝ մերթ նպաստաւոր մերթ աննպաստ արտայայտուելով անոր մասին, և շատ անգամ ուղղակի մէջբերումներ բերելով Ֆորտէն:

Ֆորտ ալ էտիսընի պէս յաջողութիւնը կը վերագրէ անխոնջ, յամառ աշխատանքի: Ֆորտի համար գործելու կարողութիւնը ուրիշ որ և է բանէ աւելի նշանակութիւն ունի: Այսու հանգերձ Պրէտֆորտ, վերլուծողը, Ֆորտի մէջ կը գտնէ գործօն, բարձր կարողութեամբ օժտուած ուղեղի մը արտակարգ և բազմապիսի արդիւնաբերութիւնը, և այս ուղեղին յղացումները իրականացնելու համար ճարտար և ընդունակ մատեր: Բայց Ֆորտ շարունակ կը շեշտէ հանդարտօրէն գործելը: Գործը մարդկութեան բնականոն վիճակն է: Մանաւանդ իբր էն կարեւոր կէտ կը յիշէ Ֆորտի պնդումը թէ յաջողութեւ համար ոչ միայն որոշեալ ժամերը պէտք է աշխատիլ այլ՝ միշտ:

Դարձեալ լաւ կազմով միտքի մը համար գործը միայն պարտականութիւն մը չէ այլ հաճոյք մը, Ֆորտի կարծիքով:

Այն ծանր աշխատանքի գործի, շահը Ֆորտի կարծիքին համեմատ նիւթա-

ԱՆԳԼԻՈՅ ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆԸ

Այս տարի Ապրիլ 26 ին կատարուած վիճակագրութեան համեմատ բոլոր Անգլիոյ եւ Ուելլզի բնակիչներուն թիւն է 39, 947, 931: Իգական սեռը 1, 670, 243 աւելի է արականէն: 1000 այր մարդու փոխարէն 1087 կիներ կան: Բնակչութեան աւելնալը վերջին 70 տարուան միջոցին նուազագոյնն է: Մահերու թիւը 10 առ հարիւր բայց ծնունդներու թիւը առկէ աւելի նուազած է: Ծնունդներու նուազագոյն համեմատութիւնը ունի Շուէտի երկրը, եւ երկրորդ կուգայ Անգլիան: Անգլիոյ ներկայ բնակչութեան թիւը անփոփոխ պահելու համար իսկ այս համեմատութիւնը չի բաւեր: Անգլիոյ բնակչութիւնը 2, 124, 692 աւելցած է, իսկ Սկոտլոնդ բնակչութիւնը 39, 943 եւ Ուելլզին՝ 63460 նուազած է: Դէպ ի Անգլիոյ հարաւային մասը գաղթային մեծ հոսանքին պատճառաւ բնակիչներու տեղափոխութիւն եղած է. այսպիսի շարժում

մը եղած է նաեւ գիւղերէն դէպ ի քաղաքները: Բնակչութեան 20 առ հարիւրը միայն գիւղերը կը բնակին: 14 քաղաքներու բնակչութիւնը կրկնապատկուած է: Մեծագոյն Լոնտոնի բնակչութիւնը բարձրացած է 8, 202, 818 ի, 20 տարուան մէջ մէկ միլիոն յաւելում մը:

ՓՇՈՒՐՆԵՐ ՎԻՃԻԼԷՆ

Ո՞վ է մարդը որ պատժէ: Յաւի միջոցաւ փրկելու համար՝ պէտք եղած ուժով և իմաստութեամբ ո՞վ օժտեց այս տարաբաղդ և տկար արարածը: Պրզտիկ տկար մանուկ մը չարաչար ծեծել ո՞րչափ զիւրին է: Ո՞րչափ զիւրին է թշուառ մարդ մը բանտի մը մէջ «չորնալու» դատապարտել: Սակայն ի՞նչ իրտուներով կը կատարուի ասիկա:

թափանչէն աւելի բան մըն է: «Ընդհա-
նուր գաղափարը այն է թէ կեանքի
գլխաւոր անէծքը ապրուստի մը համար
գործել է: Խորհող մարդիկ գիտեն որ
գործը մարդկային ցեղին փրկութիւնն
է ֆիզիքական, ընկերային և բարոյա-
կան կերպով: «Պործը մեր ապրուստը
չահելէն աւելին կ'ընէ անիկա մեր կեան-
քը կը շահի:»

Հետեւաբար, կ'ըսէ Պրէտֆորտ, Ֆորտ
սոսկալի կերպով կը հակառակի զեղիս և
հաճոյասէր կեանքի: Անիկայ ատելի
և մակաբոյժ կը նկատէ առանց գործե-
լու ապրողները: «Իմ կարծիքովս դիւ-
րակեաց կեանքէ մը աւելի զուելի բան
չկայ: Մոլիլ համար տեղ չկայ քաղա-
քակրթութեան մէջ:»

Պրէտֆորտ այս տեսականօրէն գործե-
լու շարժառիթը փնտռելով կ'ըսէ թէ դը-
րամ շինելու փափաքը չէ այն: Փոռասի-
րութիւնը, ստանձնած բանին մէջ յա-
ջողելու տենչը, շատ աւելի նշանակալից
է: Բայց ամենախմտաւոր շարժառի-
թը կը գտնէ բան մը շինելու համար յա-
ւիտենական, անգիտակից, բնագոյացին
կիրքին մէջ, զբաղած ըլլալու զօրաւոր
փափաքին մէջ: «Ֆորտ», կ'ըսէ Ճ.
Պըրոզ, «եթէ ընելու բան մը չի գտներ
կու՛զէ կամ զոպանակները մաքրել, կամ
փայտ կտրել կամ տղու մը կտուք քչել
սորվեցնել:»

Ֆորտ ներկայիս ամենահարուստ
մարդն է որ երբեք ապրած ըլլայ: Եւ այս
հարստութիւնը կարելի եղած է մանրա-
մասնութեանց մէջ դրած իր անհուն խը-
նամբին և խելքին, արդիւնաբեր աշ-
խատանքի համար իր արտասովոր կազ-
մակերպելու տաղանդին, կարելի ամէն
միջոցներով մարդկային ջանքը, ժամա-
նակը, ոյժը խնայելու կարողութեան շը-
նորհիւ:

Ֆորտի կարծիքը դրամը ծախսելու
կերպին մասին շատ հետաքրքրական
կը գտնէ յօդուածագիրը: Ֆորտ գոր-

ծաւոր մը ըլլալով՝ դրամը գործը յառաջ
տանելու նպատակէն զատ ուրիշ կերպով
վատնելու մասին չի կրնար խորհիլ:
Պերճանքի կամ հաճոյքի համար դրամ
ծախսել իր ծրագրին մէջ մեծ տեղ մը չէ
գրաւած: «Ես երբեք չեմ զիտցած թէ
իմ ծախքերս վճարելէ ետքը դրամը ինչ
պիտի ընեմ: Դրամը աշխարհիս մէջ
ոնէ կերպով ամենատնայէտ բանն է:»
Բարեսիրական նպատակներու համար
Ֆորտ կ'ուտա՞յ արգեօք: Անհատներու
համար իր առատաձեռնութիւնը անվի-
ճելի է, մանաւանդ երբ իր զգացումնե-
րուն կը դպչին: Բայց Քարնէկիի և
Րաքֆէլլերի նման ընդարձակ չափով բա-
րեգործական ձեռնաբեկներ չէ ունեցած:
Եւ ասիկայ բացատրելու համար մէջ կը
բերէ Ֆորտի խօսքը: «Սովորական բա-
րեգործութիւնը ինծի համար անտանելի
է: Քաղաքակրթ ժողովուրդը մը մէջ
ինչո՞ւ նպաստ տալու պէտքը գոյութիւն
ունենալու է: Փոխանակ անօթին կե-
րակրելու, ինչո՞ւ աւելի հեռու չերթալ
և անօթութիւնը անկարելի չդարձնել:
Տալը դիւրին է, տալը անպէտ դարձնել
աւելի դժուար է: Ֆորտի կարծիքով
ասիկայ կարելի է ամէն մարդուն գործ
գտնելով:»

Ֆորտի մէջ ամենաուշագրաւ բան
մը դրամի հանդէպ իր արհամարհանքն
է, զոր յաճախ կը յայտնէ իր խօսքե-
րուն մէջ. «Դրամը չէ որ արժէք ունի,
այլ՝ ծառայութիւնը:» Այսու հանդերձ
Ֆորտ գիտակից ըլլալ կը տեսնուի այս
միլիոններու առած ոյժին, աշխար-
հի մէջ անոր ահագին ազդեցութեան:
Պրէտֆորտ ասիկայ կը բացատրէ ըսելով
թէ դրամը ազդեցութիւն ունի ոչ թէ իր
ներքին արժէքին համար, այլ իբր մի-
ջոց ծառայելուն համար. կարեւորն է ոչ
թէ ինչ որ դրամը է, այլ ինչ որ կ'ընէ:

Մարդոց հետ յարաբերութեան, իր
և անոնց իրարու վրայ փոխադարձ ազ-
դեցութեան մասին գրելով կը յայտնէ

թէ մանուկ հասակին մէջ Պորտ իր բուր հարցերը ինքը առանձին կը լուծէր և այս կերպով թէպէտ կամայ քայց վստահ արդիւնքներ ձեռք կը ձգէր: Ան՝ գրեթէ օեռէ կարեւոր ուսուցիչ մը, նոյն իսկ իր մեքենագիտական աշխատանքին մէջը, չէ ունեցած: Կան ուրիշներ ուրոնք կ'ըսեն թէ Պորտ իր կարգ մը պաշտօնականերուն զօրաւոր ազդեցութեան և նոյն իսկ վերհսկողութեան տակ կը գտնուի: Պրէտֆորտ ասիկայ իրական չի գտնիր: Մարգերու հետ իր շփման մասին եզրակացնելով կ'ըսէ թէ Պորտ իր արագ և սուր խորհելու մէջ ունեցած հիանալի ձիրքովը մարդոց սիրտերուն խորը կը թափանցէ երբ ժամանակ ունենայ, և ամէն կարգի մարգերու հանգէպ միշտ փոփոխեալ կը դառնուի: Իրեն ծառայողներու հետ յարաբերութիւնը հետաքրքրական է: Լաւագոյնը կ'ընտրէ, անոնց իւրաքանչիւրէն կարելի ամէն բան կ'ստանայ և լաւագոյն կերպով կը վարձատրէ: Անիկայ երբեք չի հրամայեր այլ կը թելադրէ, բայց իր թելադրութիւնները կեսարի կամ

Մեծն Պետրոսի հրամաններէն աւելի կը շիւ ունին: Ամէն տեղ խեղանդամները ընկերութեան վրայ բեռ մըն են: Բայց Պորտի գործարանին մէջ կաղերը, կոյրերը, յարմար գործերով զբաղեցնելով զանոնք երջանիկ և օգտակար բրած է: Թէպէտ շատեր կան որ կը խորհին թէ Պորտ անձնասէր է բայց բոլոր աղքատներուն բարերարը և բարեկամն է կ'ըսէ Պրէտֆորտ: «Ես իմ դրամի բաժինէն աւելին չեմ ուզեր», կ'ըսէ Պորտ, «ես երթալով անկէ ազատուելու վրայ եմ, որ չափ որ կարելի է շատ թուով մալդերուն գործ տալով: Բոլոր գործը պէտք է վերահսկուի ծառայութեան սկզբունքին վրայ: Ես կուզեմ յայտնի թէ աղքատութիւնը կրնայ վերցուիլ ամէն տեսակ գործի կողմանէ մարգերու մատուցուած ծառայութիւնը աւելցնելով»: Եւ այսպէս ալ կ'ընէ Պորտ: Ահա այս կերպով է որ ան հարստացած է: Ան կ'ըսէ. «Ամէն մարդուն համար հիմնապէս լաւագոյնը կատարէ, և ասիկայ մեզի համար շահաբեր կերպով պիտի վերջանայ»: (Շարունակելի)

ԻՐԱԿԱՆ ԱՐԺԱՆԻՔԸ

Մարդ իր մասին «արժան եղածէն աւելի բան չմտածէ... ինքզինքնիդ իմաստունի տեղ մի գնէք»: Հոովմ. 12.3, 16:

Հոովմայիցսց գրուած թուղթին առաջին 11 գլուխները վարդապետական են: Իսկ մնացած մասը, մասնաւորապէս 12րդ գլուխը, գործնական խնդիրներ կը շոշափէ:

Եկեղեցիներու և քրիստոնեաներու մէջ երեւան եկած դժուարութեանց մէկ մեծ մասը յառաջ կուգայ կրօնքին կրօնքիստոնէութեան գործնական մասերուն պէտք եղած կարեւորութիւնը չտրուելուն համար:

Մարդերը քանի որ իրենց մասին իրենց արժանիքէն բարձր կը խորհին իրենքզինք իրապէս եղածէն աւելի իմաստուն կը տեսնեն: Ասոր արդիւնքը ըլլալով ամէն շրջանակի մէջ՝ մանաւանդ եկեղեցիի մէջ՝ խռովութիւններ, սիրոյ պակասութիւն, անհամաձայնութիւն նոյն իսկ բաժանումներ յառաջ կուգան: Այս մտայնութիւնը—իր մասին արժան եղածէն աւելի մտածելը—յառաջ բերող պատճառները հետեւեալներն են:

Տգիսութիւն: Տգէտը ինչպէս որ իր տկարութիւնը և թերութիւնը չի կրնար տեսնել՝ ուրիշներուն արժանիքը և բա-

րեմասնոթիւններն ալ չի կրնար տեսնել :

Հայաստանի : Հայաստանը գիտնալով հանդերձ թէ ինք տեւ տրամադրութեամբ մը չունի, կը ջանայ ինքզինքը ցուցնել իբր արժանիքի տէր մէկը :

Փառապիրութիւն : Շատեր՝ որ բարձր դիրքեր գրաւելու փառասիրութիւնը ունին՝ այդ դիրքերուն սրժանի չըլլալով կը խորհին թէ իրենք անոնց արժանի են :

Նախանձ : Ուրիշներու յաջողութեանց նախանձողները կը ջանան հաստատել թէ այդ յաջողութեանց արժանի չեն և այսպէս ընելով ցուցնել կ'ուզեն թէ իրենք ուրիշներէ աւելի արժանի են անոնց :

Մանկամարտութիւն : Պարտապահալը կանգուն կը մնայ, իսկ լեցունքը կը ծռի : Իրական արժանիքի տէր մարդիկ միշտ խոնարհ կ'ըլլան և իրենքզինքն իրենց արժանիքէն աւելի պզտիկ կը տեսնեն : Բայց խոր պիտութիւնէ, կրթութիւնէ, կեանքէ, նկարագրիւ գուրկ մարդիկ միշտ կը փորձուին իրենքզինքն իրենց եղածէն աւելի տեսնելու և ցուցնելու :

Այս մտայնութեան նշանները :

Դասապարտել, որ ամենաստուկալին է : Այս կը նշանակէ ուրիշներու թերութիւններովը և տկարութիւններովը զբաղիլ, երբ անոնցմէ գտնեն՝ զատապարտել անոնց տէրերը, երբ չեն գտներ՝ ըստեղծել, և անոնց բարեմասնութիւնները անտեսել :

Զխորհրդակցիլ : Ասիկայ անընթացքն է որով ուրիշներու կարծիքը չի հարցուիր, յանձնարարութիւններ չեն ընդունուիր, և ամէն-բան-գիտեմ ի քաղաքականութեամբ անկախ կը գործուի :

Այս մտայնութեան արդիւնքը և վընասը :

Այս մտայնութեամբ գործելով ուրիշներու ծաղրանքին կ'ենթարկուինք և մեր իրական արժէքէն վար մակարդա-

կի կ'իջնենք : Ինքզինքը բարձր նըկատող մէկը ուրիշներու աչքին առջև կը պզտիկնայ : Դարձեալ՝ անխոհեմ ընթացքի արդիւնքը ըլլալով անձնապէս կը փռատուինք և կը փռասենք՝ մեր մէջը գտնուած գործին : Ինքնահաւան մարդերը յաճախ «յօնք չինելու ատեն աչք կը հանեն» :

Այս մտայնութիւնէն ազատուելու ճամբան :

Ջանա՛ քու տկար կողմերդ տեսնելու : Մի՛ ըսեր թէ չունիս, երբոր փնտռես պիտի գտնես : Ամէն մարդ տկար կողմ մը կ'ունենայ :

Ուրիշին տկարութիւններէն աւելի բարեմասնութեանց վրայ խորհէ : ամէնէն գէշ մարդ մը կրնայ լաւ յատկութիւններ ունենալ : Մայր մը սրվոր էր միշտ ամէն մարդուն լաւ կողմը տեսնել և գովել, և երբեք որ և է մէկուն մասին գէշ չխօսիլ : Օր մը իր դուստրը իրեն ըսաւ . «Մայր, եթէ այսպէս շարունակես Սատանայի մէջ ալ լաւ բան մը պիտի գտնես և զայն պիտի գովես» : «Այո աղջիկս, Սատանան ալ գեղեցիկ բարեմասնութիւն ունի, որ է հաստատաբար շարունակութիւն», ըսաւ մայրը :

Մի՛ մոռնար որ քու ունեցած բարի բաները, լաւ յատկութիւնները և բարեմասնութիւնները քու կեանքիդ ծընունդը չեն այլ Աստուծոյ մէկ շնորհքը :

Քեզի նպատակակէտ և զաղափարական ընտրէ Յիսուսը, Անոր կեանքը, Անոր սիրող սիրտը : Դուն քեզի օրինակ մի՛ ըլլար :

«Ով որ իր անձը կը բարձրացնէ պիտի խոնարհի, և ով որ իր անձը կը խոնարհեցնէ պիտի բարձրանայ» : Յիսուս :

«Եթէ մէկը ինքզինքը բան մը ըլլալ կը սեպէ և չէ, անիկայ իր անձը կը խաբէ» : Պողոս Նիգոսիա (Կիպրոս) Ս. Կ. Աղպապեան

ՄՐԱՊԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՏ ՀԱԼԷՊԻ ԹՂԹԱԿՅԻՆ

Տէր Խմբագիր,

«Բահնիւմ»-ի 11րդ թիւին 170րդ էջին վրայ Հալէպէն թղթակց մը Միութեան տարեկան ժողովին մասին կը տեղեկարէ: Իր թղթակցութեան մէջ կը յիշէ թէ ձեռնադրեալ հովիւներէ կազմուած մասնախումբ մը բաւական ժամանակ տուած է իրենց պաշտօնակիցներէն մէկուն դաւանական ուղղափառութեան պէտքով դանդաղելու և ապա կ'աւելցնէ. «Իցիւ թէ այդ Պատ. մասնախումբը աւելի լայնամասութիւն, աւելի համբերութիւն ցոյց տար: Պէտք չէ մոռնալ որ վարդապետական հակաճառութեան նորոյթը անցնելու վրայ է»:

Յարգելի թղթակիցը Միութեան ժողովներուն եթէ նոյն իսկ ներկայ գտնուած ըլլայ պէտք չէ մասնակցած ըլլայ այն մասնախումբին զոր ինք կը քննադատէ: Քանզի, եթէ մասնախումբին մէջ եղած ըլլար ծանօթ որոշումագիրը—զոր ամէն անգամ առանց բացառութեան ստորագրած էր—ինքը փոխանակ ստորագրելու իր յանձնարարութիւնները պիտի ներկայացնէր: Եւ եթէ ստորագրելու համար բաւական պատճառ մը տեսած է, նոյն ձեռքով թէ՛ որոշումագիրը և թէ՛ քննադատականը ստորագրել չպիտի կրնար իրարու հետ համաձայնեցնել: Դարձեալ միտք պիտի բերէր որ մասնախումբը բազկացած էր Սուրբոյ մէջ կարեւոր բեմերը զբաւող փորձառու հովիւներէ, և ապա յարգելի փրօֆէսորէ, հեռասես բժիշկներէ, և խնդրոյ առարկայ երկտասարդին անկեղծ բարեկամներէն: Ասոնք աղօթքով, կատարեալ լըջութեամբ և խոր կարեկցութեամբ կրկին ու կրկին խնդրը ուսումնասիրած են, մէկ կողմէն երկտասարդին և միւս

կողմէն հոգեւոր գործին ունեցած անոր յարաբերութիւնը նկատի առած են, և միտքնոր բարեկամները անոնց յայտնած գաղափարներուն յարկաւ յոյժ մտիկ ըրած և զանոնք պահաւանք և և ասոնցմէ մէկը բաւածնելու սովոր փած է և այս կիրպով որոշումագիրը իր վերջին ձեւը առնելով ամէն անգամ զայն ստորագրած էր:

Ենթադրենք թէ յարգելի թղթակիցը մասնախումբէն դուրս գտնուող մէկըն է: Այն առին, քանի որ խնդրը գլխաւ նիստերու մէջ խորհրդակցութեան նիւթ եղաւ: Ինչեւ իր թղթակցութեան թուականը և անկէ ետք չէր կրնար գիտնալ թէ ինչպիսի՛ հսկումներ եղան, ինչպիսի՛ պատասխաններ առնուեցան և թէ որո՞նք էին այն սովորաւորական պատճառները որ ծանօթութեան շրջանէն դուրս կ'ընկնէին հոգեւորութեամբ ստացած թերի ծանօթութեամբը արդարաւնալի չէ այսպիսի վճռական բառերով քննադատել մասնախումբ մը, զոր ինք պատկառելի կը կոչէ:

Աւելի ըլլալով յարգելի թղթակիցը երբ յոյնութիւնը կ'առանձնէ յիշեցնելու որ վարդապետական «հակաճառութիւններու դարը (նորոյթը) անցնելու վրայ է, տակաւ կը նշանակէ թէ նա խնդրին էութիւնը կամ չի գիտեր կամ գիտնալ չուզեր: Արդարեւ գիտէ արդեօք թէ ինչի նորոյթը անցնելու վրայ է: Յիսուս Քրիստոսի մարմնացումին, կեանքին, մահուան, յարութեան, աստուածութեան և ուրիշ նման հարցերու մասին խորհիլ և խօսակցիլ նորոյթ է, և ան ալ անցնելու վրայ եղող նորոյթ մը: Եթէ տակաւ ճիշդ է աշխարհի համար՝ Միութեան և զանոնք ներկայացնող եկեղեցիներէն համար ալ այդպէս պէտք է ըլլայ:

Մանաւանդ երբ եկեղեցի մը երկու-
քի կը բաժնուի նորոյթը և սկզբունք-
ները զանազանելու պահուն, և խնդի-
րը տեղւոյն ամերկեացի բարեկամներուն
կը հասնի՝ որոնք կատարուած զանգա-
տը «սկզբունքով արդարացի կը գտնեն»
և զայն Միութեան կը ներկայացնեն, և
երբ յիշեալ բաժանումներէն մէկը խըն-
դիրը մամուլի միջոցաւ կը հրապարակէ,
և պաշտօնապէս Միութեան կը ղրմէ,
Միութիւնը պէ՞տք էր զայն անտեսել և
ձգձգման ենթարկել, յարգելի թղթա-
կցին ակնկալած «բայնամասութիւնը և
համբերութիւնը» ա՞յն է:

Իսկ մասնախումբը յիշեալ երիտա-
սարդին ապագային մասին յոյս տա-
ծած ըլլալով՝ յայտնիչէ ետքը թէ անոր
ներկայ գաղափարները մոլոր են, անոր
առիթ տուած էր որ ան իր կարծիքը սըը-
բազրէ և խնդիրը թողած էր իր եկեղե-

ցիին իմաստութեան և ազնիւ ջան-
քերուն:

Արդ՝ յարգելի թղթակիցը՝ փոխանակ
այդ յուսալիր երիտասարդը իր եկեղե-
ցիին մէջ գտնուող խմբակին, այդ
տեղւոյն միտնարներու գաղափարնե-
րուն, Միութեան և հանրային կարծի-
քին զէմ պայքարելու համար զրգուելու
պէս զիրք մը բռնելու, և փոխանակ
էբր թէ երիտասարդին զէմ անխրաւու-
թիւն կատարուած ըլլալը մինչև Ամերի-
կա տեղեկագրելու, մասնախումբէն ա-
կնկալած «համբերութիւնը» եթէ ինքը
անձամբ գործադրած ըլլար, արդեօք
թէ՞ յիշեալ երիտասարդին և թէ՞ ծանօթ
խնդրին հանդէպ աւելի յարգանք և կա-
րեկցութիւն յոյց տուած պիտի չըլլա՞ր:

Զերդ Անկեղծօրէն

ՍԻՍԱԿ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՔԻՒՐՏԻՍՏԱՆԻ ԱԻԵՏ. ԳՈՐԾԻՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ա. Սկզբնառութիւն

Խարբերդի Հայ Աւետ. Միութեան
կողմէն Եփրատ Գոլէճէ Փրոֆ. Մելքոն
1864 ին շրջաբերականով մը կոչ ըրաւ
Թիւրքիոյ Հայ Աւետ. եկեղեցիներուն՝
իրենց կամքն ու աջակցութիւնը առնե-
լու Քրտախօս հայերուն մէջ Աւետ. գոր-
ծին ձեռնարկելու համար: Կոչը ըն-
դունուեցաւ և որոշուեցաւ որ այդ գոր-
ծը Թիւրքիոյ Աւետ. եկեղեցիները ըս-
տանձնեն:

Այնթապէն մշտապէս ամսական 2 Օսմ.
ոսկի զրկուելու խոստումը եկաւ: Տիգ-
րանակերտի և Խարբերդի նման կարգ
մը եկեղեցիները ամէն ամսագլխոյ պը-
նակները սոսկ այդ գործին կը յատկա-
ցնէին, բայց ի անհրաժեշտ շատ մը նը-
պաստներէն: Խարբերդէն Խուլուցի
Հաճի Պօղոսը 20 տարուայ համար կտակ

մը ըրաւ նոյն նպատակին:

Տիգրանակերտէն Սարկաւազ շամ-
մաս Սալիպան երբեմն աւետարանչական
պտոյտներ կ'ընէր մինչև Բաղէշ և բոլոր
Քիւրտիստան:

Խարբերդի Աւետ. Միութեան ժողովը
1868ին Տիգրանակերտ գումարեցաւ յա-
տուկէն Քիւրտիստանի մէջ Աւետ. գործ
մը բանալու մասին խորհրդակցելու հա-
մար, և իսկոյն կ'որոշուի որ 7 քրտա-
խօս երիտասարդներ հաւաքեն և զրկեն
Խարբերդ՝ հոն քարոզչութեան պատ-
րաստուելու և զիրենք իրենց տեղերը
զրկելու քարոզչութեան համար:

Զարմանալի զուգադիպութեամբ
շամմաս Սալիպան Տիգրանակերտ կը
հանդիպի երիտասարդի մը որու անունը
տարի մ'առաջ իր քով նշանակած էր ի
Բընտվան, և հիմա ալ նոյն բաղձանքով



Հայաստան քրտերէն Աւետարանի խարդման/էջ
ՊԵՏՐՈՍ ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ, ԳԱՌԻՄԷ ԱՊԼԱՀԱՏԵԱՆ, ՊԵՏՐՈՍ ԱՄԻՐԻԱՆԵԱՆ

եկած էր անհամբեր զպրոց մը մանալու։ Սինոդը կ'առնէ զայն առաջին անգամին։ Եյն անձն էր Պետրոս Տէր Ղազարեան։ Ապա Տիգրանակերտի գետեղը Գթրպըլ գիւղէն Գառմէ Ապլահատեանը և Կիրակոս Յովհաննէսեանը, Հայնիէն Մկրտիչ Անդրէասեան, Բընտվանէն ու Սղերդէն Ապտոն ու Պետոն, Նաւ և Թիւլէն (Բընտվան) Յարօ (Յարութիւն) Կիրակոսեանը գտնելով կը զրկեն խարբերդ։ Ասոնցմէ երեքը Տիգրանակերտի եկեղեցիին ու երիտասարդաց ծախքերովը պիտի հոգայուէին, երկուքը խարբերդի և մէկը Աբարկիրի եկեղեցեաց ծախքերով։ Ասոնք իրենց գեղջկական հագուստներով կը զրկուին խարբերդ առաջին անգամին։

Բ. Առաջին գործառնորները

Վերոյիշեալ 7 երիտասարդներէն Գառմէ Ապլահատեան քարոզչական գործին վարժութեան և երկրին լաւ ծանօ-

թանալու համար առնելով խարբերդի Սինսմուտ թաղին մէջ աշխատեցաւ, տարի մ'աւ Բիւրտիստանի մէջ՝ Բընտվան, Պչէրիկ, Սլիվան, Լճէ և Հազրօ կը պատըտի աւետարանչութեամբ։ Ապա Բընտվան ձեռնադրուելով կը գործէ հոն 15 երկար տարիներ, կազմելով եռանդուն և սիրուն ժողովուրդ մը, շինել տալով գմբեթաւոր քարաշէն եկեղեցի մը, նաեւ երկրատուն մը և գպրոց մը միանգամայն։

Վեր. Ապլահատեանը բուռն փափաք և ջանքեր թափեց Բիւրտիստանի Աւետ. դործը հաստատուն և ընդարձակ հիման մը վրայ դնելու, նոյն իսկ Բիւրտիստանի մէջ միսիոնարական կէդրոն ընել տալու, հակառակ պարագային՝ եթէ խարբերդի Միսիոնարք չյօժարէին՝ կը ջանար որ զէթ Մարտինի Միսիոնարութեան յանձնուէր այդ գործը, որոնք սիրայօժարկը փափաքէին և աւելի մօտէին անոնք քսն խարբերդ։ Այս նպատակին

համար մի քանի տարիներ վեր. Ապլա-
հատեանը անձամբ կը մտնար Միսիոնա-
րական տարեկան ժողովներուն մէջ,
Խարբերդ, Կարին, Բաղէշ, Վան և Մար-
տին՝ ուր որ գումարուէին: Այսու հան-
դերձ երբ նորէն ապարդիւն ու անլսելի
եղան իր բաղձանքն ու դիմումները՝
ձգեց ի վերջոյ իր պաշտելի եկեղեցին ու
այդքան պինտ սիրով փարած գործը,
գնաց Տիգրտնակերտ, Խարբերդ, Ալն,
Զնգուշ և Մարգուան վարելու հովական
գործը 15 տարիներ ալ, և ատեն մ'ալ
Տոնճեաններու շնորհիւ ամբողջ Թիւր-
քիոյ մէջ աւետարանչութեամբ պաշտե-
լով, ի վերջոյ ընդհ. պատերազմին յար-
մար առիթով մը կ'անցնի Զուլիցերիա ու
Ամերիկա՝ իր գաւազան քով ևս ատեն
մը հանգիստ առնելու, և ուրկէ մեկնե-
ցաւ իր քարոզած, սիրած և պաշտած
Փրկչին իր արժանաւոր վարձքը առնե-
լու:

2. Պրն. Մ. Անդրէասեան Հայնիի և
Լճէի կողմերը աշխատեցաւ և ննջեց ի
Տէր:

3. Պրն. Կ. Յովհաննէսեան Զըրըզայի
(Հազրո) մէջ մի քանի տարիներ ջերմա-
պէս գործելէն վերջ կը գրէ Խարբերդ:
«Տեղւոյս ժողովուրդը ամբողջովին զըլ-
խով ու սոքով զինի ըզողին մէջ կը
թաղուին»։ և յուսահատ ձգելով՝ ուղ-
ղակի կ'անցնի Ամերիկա և անկէ յա-
ւիտենականութիւն:

4. Պետոն՝ ընտրելով աւելի բժշկու-
թեան գործը կ'անցնի Եւրոպա և անալի-
առ Անոր:

5. Ապտոն՝ ատեն մը Խանք (Բընտ-
վան) կը գործէ ու կը մեկնի Հնդկաս-
տան ուր կը մնայ երկար տարիներ:
Վերջի տարիները վերադառնալով կը
գործէ Բորիթի (Սլիվան) և ապա Սզիր-
թի մէջ՝ ուր կը ննջէ:

6. Պրն. Յարութիւնը (Յարոն) իր
զիւզին (Թիւու) մէջ չարաչար աշխատե-
ցաւ բուռն հալածանաց մէջ, յոյժ դժ-

ւարաւ շինեց ազօթատեղի և դպրատուն
մը, որպէս Նէեմիայ մը, Սր. երկսայրի
սուրը ի ձեռի պատին վրայ կայնած
կ'երգէր ի հեճուկս թշնամեաց՝ անձամբ
յօրինած երգը,

«Ազէ խանի չէզըմ լքարփիշ ու տա-
րա»,

Ազէ դէսը պըպարքինըմ խըլասէ կիւ-
նէհ քարա...:

Այսինքն՝ ես տուն պիտի շինեմ աղիւսէ
և փայտէ, ես անոր մէջ պիտի օրհնեմ
մեղաւորաց փրկիչը...» Այս օրհնեալ
գործաւորը տագնապալի և թշուառ
վախճան մը կ'ունենայ, իսկ կիւնը ճա-
րահատ գիւղին երամակը կ'արածէ:

7. Պետրոս Տէր Ղազարեանը Պէտէր
և Բնտվան դասատու-քարոզիչի պաշ-
տօններ վարելով մի քանի տարիներ,
1880 ին կը փոխադրուի Սլիվան-Փար-
զին՝ գործելով իւր տիպար դասատու,
քարոզիչ և թարգմանիչ, երաժիշտ և
բանաստեղծ: Թարգմանելով ամբողջ
Աւետարանը Քիւրտերէնի՝ ընկերակցու-
թեամբ Պետրոս Ամիրխարեանի և սըր-
բազրելով հսկողութեամբ վեր. Ապլա-
հատեանի, այլ հազիւ կրցան տպել տալ
Մատթ. էն մինչեւ Գործ. Առաքելոց,
հայատառ քիւրտերէնով: Նոյնպէս եր-
կիցս հոգեւոր քրտերէն երգարաններ,
103 և 303 երգերով տպագրութեան տա-
լով Խարբերդ և Ն. Եորք. նաև դասա-
գիրք մ'ալ հայաստան: Հուսկ յետոյ
նահատակի մը նման 10 նամակայ տան-
ջանքով մահկանացուն կնքեց 40 երկար
տարիներ հաւատարմաբար Տէրոջը ըն-
դարձակ այգիին մէջ գործող այս տի-
պար և յարգելի ծառան՝ որու ծերո. կ
կրնն ու երկու գաւազները իրենց ըն-
տանեօք կ'ապրին Հալէպ:

Ղ. Տ. ՂԱԶԱՐԵԱՆ

(Շառունակելի)

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Փարիզի Փաթէօրեան Հաստատութիւնէն Փրոֆ. Բալմէթ թոքախտաւոր ծնողներու մէկ օրուան երախաներուն թոքախտի ողջ միջբրոպներ կը ներարկէ թոքախտի դէմ դիմադրութեան ոյժ տալու համար անոնց: Ամերիկացի գիտնականները նոյն նպատակի համար մեռած միջբրոպները կը գործածեն: Երկու կերպերն ալ թէպէտ յաջող արդիւնքներ տուած են բայց տակաւին փորձառական փուլին մէջ կը զանաւորեն:

Ե՛րբ եկան Ամերիկայի առաջին բնակիչները և ինչպէ՞ս ապրեցան: Ահա այս հարցումին կը ջանայ պատասխանել Տր. Պարնլմ Պրաուն, նորագիւտ 17 քարէ տէգերը և անոնց քովի օսկորները քննելով: Մինչև հիմա գտնուած ունէք քարէ գործիքէ կը տարբերի այս իր շինուածքովը: Այս տէգը գործածող ժողովուրդին անծանօթ էր, կ'ըսէ, Պրաուն, աղեղ և նետը: Այս գիւտէ կը եզրակացնէ թէ Ամերիկայի առաջին բնակիչը 20000 տարի առաջ ապրած պէտք է ըլլայ:

Տանցիկի համալսարանէն Տր. Պրիւիէ նոր կողմնացոյց մը հնարած է ուրուն մէջ մազնիսական ասեղի տեղ ելեկտրոններ կը գործածուին ուղղութիւնը ցոյց տալու համար: 200 վոլթ ելեկտրական ոյժ կը գործածուի ելեկտրոններու հոսանք մը յառաջ բերելու, որ տախտակի մը վրայ ցոյց տուած իր հետքին փոփոխութիւններովը նպատակին կը ծառայէ: Այս կողմնացոյցը փոխանակ հիւսիսը ցուցնելու արեւեւքը կը ցուցնէ և 33 փառնետ կը կշռէ:

Մեքենական աչք մը գործածութեան գրուեցաւ որ մշուշի մէջէն երկու մղոն հեռու կրնայ տեսնել և կը գործածուի սաւառնորդներու կողմէ:

Բալիֆօրնիոյ համալսարանին մէջ գիտուններ տեսակ մը մեքենայ շինելու ձեռնարկած են որ ելեքտրականութեան և լոյսի ազդեցութեան տակ պիտի լուծէ այն տեսակ մաթեմատիկական խնդիրները գործնք աւարտելու համար շատ մը երկրիկոն տարիներ պէտք է:

Գերմանացի գիտնական մը ելեկտրական լամպարի մը միջոցաւ կըցաւ ելեկտրական հոսանքը հարիւր արհարիւր լոյսի վերածել առանց ջերմութիւն արտադրելու:

Օգտաւառնութեան կատարելութեան պիտի մօտենայ երբայնպիսի սաւառնող մեքենայ մը արտադրուի որ կարող պիտի ըլլայ գետնէն ուղղահայեաց կերպով բարձրանալով, կէտի մը շուրջ դառնալ և հորիզոնական գծի վրայ ճամբորդել և վերջը կրկին ուղղահայեաց կերպով վար իջնել:

Բսանեակ մը տարիներու աշխատանքէ մը վերջ նշանաւոր օդանաւորդ Թոմաս Լէյք կըցաւ այսպիսի սաւառնակի նմոյշներ շինելու անոնցմով փորձեր կատարել: Իր արտադրած օդանաւը ուղղահայեաց կերպով թէ՛ կը բարձրանայ և թէ՛ վար կ'իջնայ. ասոր հետ մեկտեղ օդանաւը կրնայ աստիճանական և ապակով կերպով դէպի գետինը սրանալ ունէ վտանգի մը միջոցին և կրկին կըրնայ հորիզոնական կերպով ուժգին սրլանալ:

Քաղեց՝ Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՊԵՐՈՒԹԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԸ

Կերման մը The Living Age պարբերաթերթին մէջ յօդուած լ'ուշի, ուր Պէյրութի համալսարաններուն մասին հետեւեալը կը գրէ:

Լիբանան Ասիոյ երկրներէն մէկն է, բայց իր ընդհանրապէս հարիւրին 60 ը գրել կարգաւ գրեալ է, այս կերպով ան երկրորդ կը հանգիստանայ Ասիական բոլոր երկրներու մէջ, ծառն առաջինը ըլլալով: Լիբանան իր ուսման մէջ յառաջգիտ թիւնը առաւելապէս կը պարտի կաթոլիկ և բողոքական միսիոնարական հաստատութեանց, որոնց մեծագոյն երկուքն են Սէն Ժովէֆի Համալսարանը և Պէյրութի Ամերիկեան Համալսարանը:

Յիսուսեանները (ձիգուիթ) 1831ին Պէյրութի մէջ հաստատեցին Սէն Ժովէֆի Համալսարանը, որ հիմա տարեկան մօտ 1000 աշակերտներ ունի: Զիգուիթներու կողմէ կառավարուող նախնական վարժարաններու մէջ կը կրթուին 9000 մանուկներ: Բոլոր Սուրիոյ մէջ ձիգուիթ գաղութներու աշակերտութեան ընդհանուր թիւն է 113,000-ը այսօրինք Սուրիոյ բոլոր աշակերտութեան հարիւրին 9ը:

Յիսուսեանները իրենց վերահսկողութեան տակ ունին արաբերէն լրագիր մը, մեծ ապարան մը և զանազան քրիստոնեայ հասարակութեանց—Մարոնիներու, Միլլիթներու, Հայերու, Ասորիներու, Քաղգէացիներու—համար Սէմինարիներ: Այս բոլոր գաղութներուն մէջ մահմետական ուսանողներու թիւը շատ քիչ է՝ հոն տիրող կրօնական խստութեան պատճառաւ:

Ամերիկեան Համալսարանը հաստատուած է 1866 ին, 10 տարբեր կրօնական հասարակութեանց և 14 ազգութեանց պատկանող անձեր կը կազմեն անոր բաղմանգամ ուսուցչական մարմինը:

Ուսանողութեան թիւը Սէն Ժովէֆին է 150 աւելի է. բայց անոր 540 ը ոչ քրիստոնեայ են: Սէն Ժովէֆը բացի բժշկականէն ունի նաեւ ճարտարագիտական և աստուածաբանական ֆաքուլթէներ, իսկ Ամերիկեանը ունի միայն բժշկականը. և եթէ իր ֆաքուլթէներու թիւը աւելցնէր աշակերտներու թիւը մեծապէս պիտի բազմանար: A. U. B. ունի երեք միլիոն տուար հասոյթի աղբիւր գոր կըյուսան բարձրացնել չորս ու կէս միլիոնի. տարեկան պիտու ճէն 375 հազար տուար է:

ԱԻԵՏ. ԿԵԱՆՔ

ԱԹԷՆՔԻ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆԸ ՈՐԻՐ ՊԻՏԻ ՀԱՍՏԱՏՈՒԻ ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ

Աթէնքի Սփուլալ Րիլիմըն շնախ դու թիւն առած էր Կ. Պոլսոյ մէջ բայց չկարենալով հոն մնալ առժամեայ կերպով փոխադրուած էր Աթէնք: Ամերիկեան Պորտի Մերձաւոր Արեւելքի ճիւղին՝ ամսոյս սկիզբը Կ. Պոլսոյ մէջ տեղի ունեցած տարեկան ժողովին մէջ որոշուած է որ Սփուլալ Րիլիմըն Պէյրութ փոխադրուի վերջնականապէս հաստատուելու համար: Երեցական Պորտի Աստուածաբանական դըպրոցին հետ հասկցողութեան պիտի գան գործակցելու կամ միանալով մէկ դըպրոց կազմելու համար: Այս որոշումը պիտի գործադրուի երբ ան Պորտի կեդրոնէն հաստատուի: Հաւանական է որ դպրոցը գալ տարի իր գործը Պէյրութի մէջ շարունակէ:

ՔԷՍԱՊԻ ՀՈՎԻԻԻՆ ՏՈՒՆԸ
ԿԸ ՔԱՐԿՈՐՈՒԻ

Վեր. Ե. Քասունի, որ Կ. Պոլսոյ մէջ էմանուէլ Եկեղեցիի հովիւն էր,

իրեն հղած հրաւերին ընթացողով Բէսապի Հայ Աւետ. Եկեղեցիին հովու-թիւնը ստանձնած էր մօտ տարի մը առաջ: Վեր. Քասունի ամենուն ծանօթ է իր անցնող օրգիւնարեր գործունէութեամբ թէ իբր հմտութեամբ և կարող ուսուցիչ, թէ իբր հովիւ քարոզիչ և հայագիտական ուսումնասիրութիւններու իբր հեղինակ: Անոր պատմական ընդարձակ հմտութիւնը, աւետարանական փորձառութիւնը և խոր գիտակցութիւնը զանկաւ կ'ընծային իբր մեր լուսագոյն վստահելի ոյժերէն մէկը, որուն ներկայութեամբ մեր մէջ Սիւրբ Սաւետ. Միութիւնը իմացական և հոգեւոր կարեւոր գործիչ մ'ալ ունեցաւ:

Ատեն մը, իր զաւէն ետքը, Բէսապի մէջ գործերը հետեւեցան բնականոն ընթացքի և ամէն ինչ կը խոստանար յաջող և խաղաղ շրջան մը այս միշտ խռովեալ եկեղեցիին համար: Սակայն շատ չանցած չարագուշակ նշաններ յայտնեցին թէ փոթորիկ մը պատրաստուելու վրայ է: Առաւելապէս դպրոցական խնդիրներու շուրջ դպրոցի հոգաբարձութեան և Վեր. Քասունիի մէջ յառաջ եկաւ անհամաձայնութիւններ, որոնք շուտով աւելի մեծ համեմատութեան հասան: Վեր. Քասունի իբր իր կոչումին հաւատարիմ և գիտակից հովիւ մը սկսաւ եկեղեցիին վերակազմել և զայն զօրացնել նոր երիտասարդ խոստումնալից ոյժերով: Ասիկայ կ'երեւի թէ շատ հեշտ չթուեցաւ կարգ մը տարրերու. և մանաւանդ Քասունիի անջիջող և հաստատ դիրքը աւետ. շահերը պաշտպանելու մէջ՝ անմարսելի թուեցաւ անոնց: Եւ զրգրուումները շարունակեցին Վեր. Քասունիի գէմ թէ՛ եկեղեցիին մէջ և թէ՛ եկեղեցիէն դուրս: Դժգոհ և հակառակորդ տարրեր Պատուելիին հրաժարու-մը պահանջեցին: Բայց ան մնաց անդրդուելի: Վերջացող ամսուան միջոցին, երբ օր մը Վեր. Քասունի խանութի

մը մէջ կը նստէր, երիտասարդ մը սրահամարհական լեզուով կը պոռայ թէ՛ տակաւին ան ինչ կը գիգերի Բէսապի մէջ: Նոյն օրը գիշերուան ժամը 9ին երբ ամէն ոք քունը մտած էր պատանիներու և երիտասարդներու խուման մը կը յարձակի Վեր. Քասունիի տան վրայ, կը քարկոծեն սուներ, ապակիները ջարդ ու փշուր կ'ըլլան, անցիները ճարսափի կը մտնուին: Դէպքէն քիչ ետքը Տիկին Քասունի և երախան անհանգիստ ըլլալով դարմանութի համար Հալէպ կը հասնին: Դէպքէն վերջը Վեր. Քասունի կը հրաժարի:

Այս միջոցին Բէսապի Եկեղեցիէն հանրագրութիւն մը կը ղրկուի Միութեան Հալէպի շրջանի Վարչութեան յայտնելու թէ՛ իրենք ամէն զինով հաւատարիմ պիտի մնան Սաւետ. Եկեղեցիին շահերուն, թէ իրենք Վեր. Քասունիէն գոհ են և կը պնդեն որ ան Բէսապ մնայ: Բէսապէն ղրկուած պատուիրակութիւն մը կուգայ Հալէպ հաստատուելու այս դրութիւնը:

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԵԿԵՂԵՑԻԻ ՀՈՎԻԻԸ ԿԸ ՀՐԱԺԱՐԻ

Վեր. Կարապետ Յարութիւնեան, որ մօտ 10 տարիէ իվիր Հալէպի Էմմանուէլ Հայ Աւետ. Ժող. Եկեղեցւոյ հովուական պաշտօնը կը վարէր, ասկէ մէկ ու կէս ամիս առաջ հրաժարեցաւ իր պաշտօնէն: Յուլիս 28ին, Կիրակի իրիկուան քարոզէն ետքը, խնդիրը վերջին անգամ ըլլալով ժողովուրդին ներկայացուեցաւ, և մեծամասնութեամբ Վեր. Յարութիւնեանի հրաժարականը ընդունուեցաւ:

Տիւր ՃՈՁԷՖ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, գուռակը Վեր. Կ. Յարութիւնեանի, Ամերիկա գացած էր իր ուսումը կատարելագործելու համար: Ամերիկայէն Մ. Հ. Ֆուլթ Պէյրութի Ամերիկեան համալ-

սարանի ղեկավարութիւնը «էլ Բիւլլիէ» թերթին թիւ 6ին մէջ իր մասին սապէս կը գրէ. «Տիար ճ. Յարութեան հարձեւ Պէյրութի համալսարանին մէջ սոփոմոր կարգը աւարտելէն ետքը Ամհրիկա եկաւ Գոլոմպիայի մէջ իր գոյն-ճական դասընթացքը աւարտելու: Ապա մտաւ Եռնիւրն Աստուածաբանական Ճեմարանը, զոր աւարտելէն ետքը հոն յետընթացաւ արտի դասընթացքի հետեւելով վարդապետ փիլիսոփայութեան (PH. D.) տիտղոսը ստացաւ Ապրիլ 30ին, երբ Գոլոմպիայի եւ Եռնիւրնի փիլիսոփայութեան ճիւղէն Ցանդամներ իր աւարտական թիւը իրստ քննադատութեան ենթարկեցին: Յարութեան սուր միտքը և անկեղծ բնութիւնը իր բոլոր ուսանողութեան շրջանին իրեն լաւ անուշ ապահոված են:»

Նիւ ԵՈՐՔի Հայ Աւետ. եկեղեցիի «Շարժական թերթիկ»ին մէջ կը կարդանք:

Աւետարանչական Ընկերակցութեան Խնամակալութիւնը (Board of Directors) իր տարեկան ժողովը գումարեց մեր եկեղեցիին մէջ Յունիս 18ին, Հինգշաբթի, որ երեքուկէս ժամ տեւեց, ըսկըսելով կէսօրէ վերջ Յին և վերջանալով 6.30ին: Նախորդ ժողովին տրարքը կարգացուելէն և վաւերացուելէն վերջը Ընդհանուր Քարտուղարը՝ Տր. Հատիտեան և ապա գանձապետը, Տիար Մուշեղեան, իրենց տեղեկագիրները տուին: Տր. Հատիտեանի յանձարարութիւններէն ոմանք մասնաւոր խորհրդակցութեան առարկայ եղան: Այսպիսի տնտեսապէս նեղ և դժուարին տարուան մը մէջ Տր. Հատիտեանի ձեռք բերած թէ՛ բարոյական և թէ՛ նիւթական յաջողութեանը համար ժողովէն գնահատութեան միաձայն քուէ տրուեցաւ: Իր գործունէութիւնը մեր բոլոր եկեղեցիներուն վստահութիւնը և

սէրը թէ գործին և թէ իր անձին հանգէպ աւելցուցած է: Նկատելով թէ տնտեսական ներկայ պայմաններուն տակ ընկերակցութիւնը իր ծախքերը իր նուազագոյն սահմաններուն մէջ պահելու է, նկատելով նաեւ թէ քարտուղարին կողմէ տրամադրուած կէս ժամանակը յառաջիկայ տարի ևս գործին տնտեսական և ստիպողական պահանջներուն բաւարարութիւն պիտի տայ, ժողովը որոշեց միաձայնութեամբ մէկ տարուան համար ևս հաստատել Տր. Հատիտեանը իր պաշտօնին մէջ՝ նոյն տոն իրեն խոստանալով գործակցութեան աւելի լայն բաժին մը մասնաւորաբար եկեղեցիներ այցելելու գործին մէջ: Խնամակալութիւնը՝ ըստ կանոնի իր մէջէն ընտրեց Գործադիր Մարմին մը մէկ տարուան համար, կարգելով Նախագահ՝ Կ. Թ. Փուշման, Փոխ-Նախագահ՝ Տիար Յ. Մեծիկեան, Գանձապետ՝ Յ. Մուշեղեան, Ատենադպիր՝ Գ. Գաբրիէլեան և երեք ալ խորհրդականներ:

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԱՄԵՐԻԿԱՅԻ Մ. Նահանգաց, Քանատայի, ՀԲ. Ամերիկայի մէջ 4000 աշակերտներով մօտ 75 Հայ գարնցներ կը գտնուին Ամերիկայի Հայոց Առաջնորդարանի վիճակագրութեան համեմատ:

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ և Պոլկարիոյ Հայ գաղթականները գործադրկութեան պատճառաւ մեծ թշուառութեան և անօթութեան մատնուած են: Կ'ուզեն Հայաստան կամ Սուրիա գաղթել:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ,
ԿԵԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾԸ

Ասկէ ետքը այս սիւնակի մէջ պարբերաբար պիտի հրատարակուին Հ. Բ. Բերդորթեան Միութեան Փարիզի Ընդհանուր Տնօրէնութեան ղրկուած լու-

րերը, որոնց առաջինը այս թիւին մէջ հաճոյքով կը ներկայացնենք մեր ընթերցողներուն : Ծ.ՈՍ.

Միութեան ժընէվի պատուիրակ Տ. Լ. Բաշալեանի վերջին տեղեկագրութեան համաձայն, Գաղթականներու Միջազգային Պաշտօնատունը Յուլիս 1էն Յ գումարուած է ժընէվ՝ նախագահութեամբ Մ. Մաքս Հուպէրի և մասնաւորապէս զբաղած է Սուրիոյ հայ գաղթականներուն տեղաւորման գործով : Սուրիոյ Ֆրանսական Բարձր-Գործիչը Մ. Բոնոյի և Մ. Հուպէրի միջև Յուլիս 24ին Բարիզ Արտաքին Գործոց Նախարարութեան Պաշտօնատան մէջ կայացած համաձայնութեան հիման վրայ, Ազգերու Ընկերութիւնը պիտի շարունակէ այդ ձեռնարկով զբաղիլ մինչև 1933 Դեկտեմբեր 31, որ տաքն Պէյրութի և Հալէպի քէմբերուն մէջ մնացած 3000ի չափ Հայ ընտանիքներուն տեղաւորումը աւարտած պիտի ըլլայ և այդ ընտանիքները այլ ևս պէտք պիտի չունենան միջազգային օժանդակութեան : Գործը զլուխ հանելու համար 6 միլիոն Ֆրանսական Ֆրանք կը նախատեսուի, որուն 1,800,000ը պատրաստ է ժընէվի Պաշտօնական Սնտուկին մէջ. անգլիական հայանպաստ կազմակերպութիւնները (որ մինչև հիմա աւելի քան 2,100,000 Ֆրանք տուած են այս գործին) պատրաստ ունին զեռ 500,000 Ֆրանք (4000 անգլ. ոսկի) : Ազգերու Ընկերութեան ձեռքով հաստատուած գաղթականներէն, որ սկսած են արդէն մաս առ մաս վճարել իրենց պարտքը, 1932 ին և 1933 ին 1,500,000 Ֆրանք կ'ըստպատուի : Մնացեալին համար, Նանսընեան Դրոշմի հասոյթին հայկական բաժինէն զատ, յոյս դրուած է նաև Նանսընեան Հիմնադրամի հանգանակութեան վրայ : Ամէն պարագայի մէջ, մէկ ու կէս երկու երկու միլիոն Ֆրանքի պէտք կայ տակաւին, և ժընէվի պաշտօնա-

տունը կը յուսայ որ հայ մագմակերպութեանները իրենց կարելին պիտի ընեն այդ գումարը հայթայթելու համար : Այս հարցին վերաբերմամբ, Մ. Մաքս Հուպէր էքս-լէ-Պէնի մէջ տեսակցութիւն մը ունեցած է Միութեան Նախագահ Տ. Գ. Կիւպէնկեանի հետ :

Նանսընեան Հիմնադրամի կողմը Մայիս 13ին հրապարակ հանուած է և 12,000 օրինակ ցրուած աշխարհի ամէն կողմը, հանրային հաստատութեանց և անհատներու : Նորվեգիոյ և Տանըմարքայի մէջ արդէն ազգային յանձնաժողովներ կազմուած են, այդ հիմնադրամին ի նպաստ, և հանգուցեալ Տոքթ. Նանսընի եղբայրը և Նորվեգիական կառավարութիւնը ժընէվի Գաղթականներու Պաշտօնատան յատկացուցած են 14,000 անգլ. ոսկի գումար մը : որ յոյսած է Նանսընի արուած Նոպելեան մրցանակէն և Նանսընի հրատարակիչ Մ. Էրիքսընի նուիրած կարիւր գումարէն : Այդ 14,000 ոսկիին եկամուտը պիտի գործածուի գաղթականներու պէտքերուն : Ժընէվի Պաշտօնատունը կ'աշխատի այժմ հանգանակիչ յանձնաժողովներ կազմելու զանազան երկիրներու մէջ ի նպաստ յիշեալ կոչին, որ բաց պիտի մնայ երկար ատեն :

Յունաստանի հայ գաղթականներէն մաս մը Ֆրանսա երկրագործութեան մէջ տեղաւորելու հարցը տակաւին գործնական արդիւնքի մը չէ հասած : Կը թըռուի թէ Ֆրանսական կառավարութիւնը մտահոգուած է այն հարցով թէ երկրագործութեան համար արտասահմանէն բերուած մարդիկ շատ չանցած կը թողուն իրենց գործը և կ'երթան ճարտարարուեստի մէջ աշխատելու, այսու ի դերու հանելով իրենց համար եղած ծախքերը և վտանգելով Ֆրանսայի ազարակատիրոջ շահերը :

Բարիզ, 22 Յուլիս 1931
ԴԻԻԱՆ՝ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

Է. Բ. ՁԱՆԻՑԻ ԷՋՐ

ՄԻԱՑԱԾ ԿԸ ԿԵՆԱՆ

Քրիստոնէութիւնը կ'ընծայէ հինգ բաներ որոնք կամ միասին պիտի կենան և կամ միասին պիտի իյնան։ Ժամանակ մը կրնանք նախընտրել մին կամ միւսը։ սահայն ուշ կամ կանուխ, կամ բոլորը միասին ընդունելու ենք, և կամ բոլորը միասին ձգելու ենք։ Աստուծոյ տունը, — (ա) Աստուծոյ անունը, (բ) Աստուծոյ տունը, (գ) Աստուծոյ խօսքը, (դ) Աստուծոյ օրը և (ե) Աստուծոյ Որդին։ Մարդու մը կեանքին մէջ այս չղթային զօրութիւնը անոր ամէնէն սկար օղակին զօրութիւնն է։

Եթէ չյարգենք Աստուծոյ տունը, չպիտի կրնանք երկար առնել սիրել Աստուծոյ խօսքն և իր Որդին։ Եթէ զանց ընենք Աստուծոյ օրը, պիտի մոռնանք իր տունն ու խօսքը։ Եթէ մոռնանք Աստուծոյ խօսքը պիտի կորսնցընենք իր օրուան տաճանաշէնորհուրդը և իր Որդւոյն ներկայութիւնը։ Եթէ թեթեւութեամբ վերաբերուինք իր անուան հետ, չպիտի կրնանք երկար առնել սիրել իր օրը և իր տունը։ Եթէ ուրանանք իր Որդին, պիտի թողունք Աստուծոյ տունը, պիտի սրբապղծենք իր օրը, պիտի պղտիկցնենք իր անունը, և մոռնանք իր խօսքը։ Աստուծոյ միացած կը կենան։ Ձենք կրնար մին կամ միւսը նախընտրել։

Յարգենք ու սիրենք բոլորը միասին։
Թրգմ. ԱՐԱՔՍԻ ՓՕԼԱՏԵԱՆ

ՄՇՈՒՇԻ ՄԷՋԷՆ

Ուրբաթ իրիկուն մ'է։ Էքիզ-Օլունգէն կը վերադառնամ Բէսապ։ Ձմեռը սկսած է, և այդ բարձր լեռներուն վրայ մշուշ կը պառկի շատ թանձր։

Մութ ու մառախուղ կը պատէ չորս դին։ Ո՛չ գիւմացէն Բէսապի բերդին առիւծածէ մնացորդը կը տեսնեմ, ո՛չ աջ կողմս երկարող ձորերը, և ո՛չ ալ ձախէն Կասիոս Լեռը որ իր գլուխը վեհօրէն կը վերցնէր բարձրութիւններու հաւ։ Սոջեւ հազիւ մէկ երկու քայլափոխ կրնամ տեսնել։ Ամէն կողմ տարտամ լռութիւն մը կը տիրէ։

Հոն կասկածը կը թաղաւորէ։

Ո՞ւր կ'երթամ։ Կարելի՞ է միթէ ճամբաս շարունակել։ Քիչ մ'անդին օձապտոյտ նեղ արահետը արդէն կ'անհետի գոլորշիներու ծածկոյթին ներքեւ և մի' գուցէ գահավէժ մը բացուած ըլլայ առջեւ՝ զիս կլլելու պատրաստ։

Բայց չէ՞ որ մէկ քայլ կը տեսնեմ։ Չէ՞ որ այս կիսախաւար լոյսին մէջ ուղին քիչ մը կը պարզուի աչքերուս։ Մէն մի քայլափոխիս այդ միջոցը քիչ մը առաջ պիտի երթայ։ Եւ վերջապէս ես պիտի կրնամ հասնիլ իմ կայանս։

Տարակոյսնե՛ր։ Անոնք ալ յաճախ հոգիս կը պատեն միզամած ամպերու նման։ Տարակոյսի անորոշութեանը մէջէն միայն մէկ քայլ կը պարզուի հոգւոյս աչքերուն առջեւ։ Հեռուն ծածկըւած կ'ըլլայ մթութեան մէջ։

Մի՛ երկբայիւր սակայն, քալէ՛ քեզի շնորհուած աղօտ լոյսով։ Քայլ առ քայլ ապահով կը հասնիս վախճանին։

* *

Պահ մը գլուխս վեր կ'առնեմ։ Ո՞ւր է մշուշը։ Ո՞ւր է մէզին տամուկ հպումը գէմքիս ու աչքերուս։ Ո՞ւր է անորոշութիւնը։

Մշուշը վերցած է։ Մէզի գոլորշիները գուլայ, գուլայ վեր կ'իլլեն։ Ահա առաջիկ լեռներն ու ձորերը պարզուած են աչքերուս առաջ։ Անդին իմ փարոսըս, Բէսապի առիւծը ինծի կը նայի։

Տարակոյս, երկբայե՞մ... Ո՞ւր է հիմայ այդ գորշ անորոշութիւնը։

Հոգի՛ս, Աստուծոյ քեզի շնորհած

լոյսին հետեւէ մինչեւ որ օր մը բոլոր տարակոյսներդ, համայն անորոշութիւնք, կասկած ու մթութիւն փարատին: Քաւէ՛ փոխանակ կենտրով տատամսելու, քաւէ՛ հաւատքով որ է բանալին յաւիտենական գաղտնիքներու: **Քհսապ**

Տ. Ե. ՔԱՍՈՒՆԻ

ԱԼԵԻՈՐ ՈՒՈԼՁԻՆ ՁՂՁԱՅ

Կարտինալ Ուոլլի՝ Անգլիոյ հզօր թագաւորներէն Հէնրի Ը. ի աջ բազուկըն էր և երկար տարիներ ծառայեց իր վեհապետին իբր հաւատարիմ խորհրդագական մը: Սակայն խոր ծերութեան մէջ անխրաւարար անոր կողմէն լքուեցաւ և արհամարհուեցաւ: Այն ատեն Ուոլլին զգլուծի արցունքը աչքերուն մէջ՝ ըսաւ. «Եթէ այսքա՛ն տարիներ, այսքա՛ն հաւատարմութեամբ իմ Աստուծոյս ծառայած ըլլայի՛ նա զիս չէր լքեր:»

Կեանքի մէջ Յիսուսի ծառայողները միայն չեն զղար:

ՁԱՆԻՑԻ ԿԵԱՆՔԷՆ

Յուլ. 11-16 ին Սան Ֆրանսիսքոյի մէջ գումարուեցաւ Ձանիցի 9 ըդ տարեկան համաժողովը և յօրինանակաւ հանգէսներ եղան: Աշխարհի ամէն կողմէն պատգամաւորներ զրկուած են հոն:

ՍԵԼԱՆԻԿԻ ՁԱՆԻՑԷՆ ԿԸ ԳՐՈՒԻ.—

Ընկերակցութիւնս կազմուեցաւ 1930 ին Պատ. Կ. Ֆարաճեանի նախաձեռնութեամբ: Այս միջոցին ամէն կերակրունեցանք մեր աղօթած ժողովը: Խօսողներ եղան թէ անդամներէն և թէ փորձառու համակիր անհատներէ: Իւրաքանչիւր ամսոյն առաջին կերակրին ունեցանք նուիրման ժողովը որուն մասնակցեցան անդամները՝ աղօթքով, թեղադրական խօսքերով, վկայութեամբ, երգով և այլն:

Ամառուան ընթացքին ունեցանք լրտարաններ որոնք, ամառուան վազանձէն վերջ, պարբերաբար շարունակենք:

Խթման գիշերը ուրիշ միութիւններու կարգին մեր ընկերակցութիւնն ալ իր երգչախումբով Աւետիսի պտըտեցան մինչև առաւօտ, երբ ա՛լ ժողովուրդը գունդապունդ եկեղեցիները կը զիմէր: Ասկէ գոյացած 2100 տրախմին գործածուեցաւ բարեսիրական նպատակներու:

Տօներուն և ուրիշ առիթներուն քաղաքիս արուարձաններու Հայ գաղթականներուն և հիւանդներուն այցելելով զանոնք մեր երգերովը քիչ թէ շատ ուրախացուցինք:

Ընկերային յանձնախումբի միջոցաւ կազմակերպուեցան երեկոյթներ և պատոյտներ որոնք խիստ հաճելի և օգտակար հանգիստացան եւ յաւէտ յիշատակելի պիտի մնան մեր մտքերուն մէջ:

Վերջերս ձեռնարկեցինք ժողովըրդային Գրադարանի հիմնումին որուն ճոխացման համար մեծապէս երախտապարտ ենք ամէն անոնց որոնք իրենց նուէրներովը մեզ քաջալերեցին: Յուսով ենք որ այս ձեռնարկին մէջ մեզ քաջալերողներուն շարքը աւելի պիտի երկարի:

Յուսով ենք որ ապագային պիտի կարողանաք աւելի ծառայել մեր նպատակին, որ է «Քրիստոսի և Եկեղեցւոյ համար:»

ԲԵԹԵԼ ԵԿԵՂԵՑՈՅ (Հալէպ) Ձանից Պատանեացի կողմէ բեմագրուեցաւ Պ. Դուրեանի «Սև Հողերը» և յաջող անցաւ: ԷՄՄԱՆՈՒԷԼ ԵԿԵՂԵՑՈՅ (Հալէպ) Ե. Ձանից ը իրենց Յուլիսի նուիրման ժողովին մէջ հանգանակութիւն մ'ըրաւ Մամլթէյնի թողախտաւորներուն համար և գոյացաւ 250 Ս. Դ:

صاحب الامتياز والمدير المسئول
القس ق. هاروتونيان